ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2024 թ.

«ՀԵՏՔ» ԹԵՐԹԻ ԼՐԱԳՐՈՂ
ՏԻԿԻՆ ՔՐԻՍՏԻՆԵ ԱՂԱԼԱՐՅԱՆԻՆ
kristine.a@hetq.am

Հարգելի տիկին Աղալարյան

Ի պատասխան Ձեր 31.05.2024թ. գրությանը

Մայիսի 26-ին տեղի ունեցած ջրհեղեղից հետո աշխատանքային կապ ենք հաստատել մարզի տարածքում առկա պոչամբարների անվտանգության հետ առնչվող ընկերությունների, պետական մարմինների և համայնքների բնակավայրերի վարչական ղեկավարների հետ:

Ստացված տեղեկատվությունների համաձայն մարզի տարածքում գործող, կոնսերվացված և ռեկուլտիվացիայի ենթակա պոչամբարները ջրհեղեղից չեն տուժել և գտնվում են վերահսկողության ներքո:

Կից Ձեզ եմ ուղարկում Լոռու մարզային փրկարարական վարչության, «Թեղուտ» ՓԲԸ-ի և «Ախթալա ԼՀԿ» ՓԲԸ-ի պատասխանները:

Առդիր՝ էլ. նյութ:

Invalid signature

X

ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ

Հարգանքով՝ Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

Կատարող՝ Արտակ Դեմիրչյան
Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության
վարչություն, հեռ.՝ (0322 4 30 99)

«ԱԽԹԱԼԱՅԻ ԼԵՌՆԱՀԱՐՍՏԱՑՄԱՆ ԿՈՄԲԻՆԱՏ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, Լոռու մարզ, գ. Ախթալա հեռ. (+374) 98 311 365 akhtalalhk@gmail.com

Ե 24 - 90

<06> 06 2024թ.

ՀՀ Լոռու մարզպետ

Ա. Ղազարյանին

Հարգելի պարոն Ղազարյան,

Ի պատասխան Ձեր հարցմանը, տեղեկացնում ենք, որ «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ին պատկանող պոչամբարներին վտանգ չի սպառնում: Տեղեկացնում ենք նաև, որ աղետից հետո պոչամբարը զննվել է նաև ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության Լոռու մարզային փրկարար ծառայությունների կողմից:

Վ. Հակոբյան

գլխ. տնօրեն

Կ.Տ.

"Akhtala Mountain-Enrich Combina" CJSC
c. Akhtala, Marz Lori, RA,
tel. (+374) 098 311 365

"Ахтальский Горнообогатительный комбинат" ЗАО
РА, Марз Лори, г. Ахтала
Тел: (+374) 098 311 365

Լոռու մարզ, գ. Թեղուտ
05.06.2024թ.
Ելք № – 099

Լոռու մարզպետ
Արամ Ղազարյանին

Հարգելի պարոն Ղազարյան,

Ի պատասխան Ձեր 2024 թվականի հունիսի 3-ի գրության հայտնում եմ.

Տեղի ունեցած աղետը պոչամբարի ամբարտակի մարմնի վրա որևէ ազդեցություն չի գործել: Ամբարտակն անփոփոխ վիճակում է:

Պոչամբարում աշխատող գործառնական անձնակազմը վարարման ժամանակահատվածում ձեռնարկել է սպառիչ օպերատիվ միջոցառումներ, որոնք միտված են եղել կանխելու վարարված ջրերի հոսքը պոչամբար:

Այս պահին ամբարտակն ամրացված է լրացուցիչ ժայռային գրունտով: Այս աշխատանքն իրականացվել է վերջին 2 տարիների ընթացքում և այս պահին ևս շարունակվում է:

Ներկայումս «Միգրուպ» նախագծային ընկերությունը Ստավրոպոլի հետազոտական կազմակերպության մասնակցությամբ «Ապարաժ» ընկերության սարքավորումների միջոցով իրականացնում է պոչամբարից հանուկների ընտրություն՝ դրանց լրացուցիչ ուսումնասիրության համար: Դրանց ուսումնասիրությունից հետո կկատարվի պոչանքների կոնսոլիդացիայի դինամիկայի հաշվարկ, պոչամբարի ամբարտակի կայունության աստիճանի վերահաշվարկ և, հնարավոր է, պոչամբարի ամբարտակի՝ ժայռային գրունտով բարձման աշխատանքների ծավալների հստակեցում:

Հորդառատ անձրևի և Դեբեդ գետի հեղեղման արդյունքում.

1. Խցանված էին ջրանցքները, որոնք նախատեսված էին գետի պոմպերով (հող, ավազ և մանրաքարեր) հեղեղված ջրերը հեռացնելու համար, լցված էր պարզեցման լճակը, որտեղ հավաքվում է հարստացուցիչ ֆաբրիկայում փակ ցիկլով հանքաքարի վերամշակման համար օգտագործվող ջուրը:

2. Ամբողջությամբ ջրալցվել է Դեբեդ գետի վրա գտնվող Ընկերության պոմպակայանն իր սարքավորումներով:

3. «Թեղուտ» ՓԲԸ տանող ճանապարհը 3 տեղ ողողվել է:

Վատ եղանակի և ջրհեղեղի այս հետևանքներն անհնարին են դարձրել հանքաքարի արդյունահանման և վերամշակման աշխատանքների շարունակումը, ինչպես նաև պատրաստի արտադրանքի առաքումը գնորդներին: Հանքաքարի արդյունահանման և վերամշակման արտադրական գործունեությունը կասեցվել է 26.05.2024 թվականից մինչև թվարկված հետևանքների վերացումը:

«Թեղուտ» ՓԲԸ

ՀՀ Լոռու մարզ, գյուղ Թեղուտ
Հեռ.՝ +374 60 622 533
Էլ.փոստ՝ info@teghoutmining.am
www.teghoutmining.am

Teghout CJSC

Teghout village, Lori Province, RA
Tel: +374 60 622 533
E-mail: info@teghoutmining.am
www.teghoutmining.am

Ներկա պահին.

1. Դադարեցվել է հանքաքարի արդյունահանման և վերամշակման արտադրությունը, նշված աշխատանքների իրականացման տեխնոլոգիայում ներգրավված անձնակազմն ուղարկվել է ոչ գործատուի մեղքով հարկադիր պարապուրդի:
2. Մաքրվում է պարզեցման լճակի պոմպը (շուրջօրյա ռեժիմով)
3. Կատարվում է Դեբեդ գետի պոմպակայանի մաքրում հողից և քարերից, պոմպակայանում տեղադրված էլեկտրասարքավորումների ստուգում և նորոգում;
4. Կատարվում է «Թեղուտ» ՓԲԸ տանող ճանապարհի վերականգնում:

Բացի այդ, «Թեղուտ» ՓԲԸ-ն մասնակցել է վարարման հետևանքների վերացման հետևյալ աշխատանքներին՝ տրամադրելով անձնակազմ տեխնիկա.

1. Դեբեդ գետի վրայով դեպի Ախթալա տանող հետիոտնային կամրջի վերականգնման աշխատանքներին:
2. Շնողի ճանապարհների վերանորոգման աշխատանքներին:
3. Դեբեդ գետի ձախ կողմում գտնվող երկաթուղային հարթակների վրա շինարարական տեխնիկայի բեռնման իրականացմանը:

«Թեղուտ» ՓԲԸ

Գլխավոր տնօրեն Վլադիմիր Նալիվայկո